

ԱՋԳՍՏՆՈՒԹԵԱՆ ՆՃԱՆՆԵՐԸ

Ըստ Կառուցկու

Տաճկահայոց թերթերը աչքի տակով անցնելիս մենք երբեք չենք հանդիպում ոչ մի գրութիւն, որ զանգատ պարունակէր հայերէն լեզուն չը գիտենալու մասին: Ամեն տեսակ թերութիւնների մասին խօսք եղել է և լինում է այդ հանդէսներում, բայց ոչոք չի ասում թէ տաճկահայոց մէջ մայրենի լեզուն արհամարհողներ կամ չիմացողներ կան: Թէ ի՞նչ պատճառներով է բացատրւում, որ արեւմտեան հայերը աւելի լաւ գիտեն մայրենի լեզուն և նրանց մէջ, նոյն իսկ Կ. Պօլսում, չի կարելի գտնել մայրենի լեզուն չիմացող հայ—այդ մասին չէ խօսքս: Ես միայն յիշեցնում եմ մի անուրանալի փաստ: Բոլորովին հակառակը տեղի ունի մեզանում: Դեռ այսօր շատ ընտանիքների ծնողները ոչ մի լեզուն չը գիտեն, իսկ հայերէն էլ հազիւ փողոցի խօսակցական լեզուով գիտեն խօսել, բայց նրանց որդիքը խօսում են միայն ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և ընտել ոչ հայերէն: Մենք ամենից պակաս էլ սրա մասին ենք մտածում, թէ եթէ մենք իրօք որեւէ առաջադիմութեան կամ ազգային գործունէութեան մասին անկեղծօրէն հոգայտւ լինենք, լեզուի խնդիրը պէտք է ամեն մի կուսակցութեան ծրագրի մէջ առաջնակարգ տեղ բռնէ: Ամեն մի ազգ, որ սեփական հոգեկան և մտաւոր ուժերը ինքնուրոյնաբար զարգացնելու յաւակնութիւն ունի և ձգտում է որևէ դրական համայնական կեանքի իդէալին՝ նա լեզուի տարածման խնդիրը անտես անել չի կարող: Այս տեսակէտից անցեալ տարի ռուս հրապարակախօս Կառուցկիի մի փոքր յօդուածը վերոյիշեալ վերնադրով շատ հետաքրքրական է, որի հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել Վլոմայի՝ ընթերցողներին: Հասարակական կեանքի երևոյթները, ասում է հեղինակը, երբեք կատարեալ անշարժութեան մէջ չեն լինում և յառաջանում

են մարդկանց փոխադարձ շփումից և յարաբերութիւններից, իսկ մարդիկ բազմազան և տարբեր են իրանց ձգտումներով ու անընդհատ փոփոխման մէջ է նրանց հոգին: Այս է պատճառը, որ շատ անգամ վերին աստիճանի դժուար է լինում որոշել որևէ հասարակական կեանքի երևոյթ:

Օրինակ. փորձեցէք որոշելու թէ ի՞նչ է պրօլէտարիան.

«—Դուք կարող էք ասել, որ պրօլէտարիան սեփական-նութիւնից զրկուած մի մարդ է, որ ստիպուած է իւր ոյժը վաճառելու և ապրելու այս վաճառումով: Բայց այս որոշումին դէմ մի քանի տնտեսագէտներ կարող են առարկել թէ կան շատ վարձկան բանուորներ, որոնք ունեն խնայողական տեսութիւնով պահ տուած փող կամ նոյն իսկ պետական արժէթղթեր, ուստի և անկարելի է, կասեն այս գիտնականները, զանազանիկ դրամատէրը մշակ-բանուորից: Զնայելով այսպիսի կարծիքներին՝ սակայն մենք ամեն օր տեսնում ենք և ոչ մի կերպ չենք կարող շփոթել բանուորը դրամատիրոջ հետ: Այսպիսի դժուար լուծանելի խնդիրների շարքին է վերաբերում և ազգայնութեան խնդիրը: Ազգայնութեան ամենաաչքի ընկնող նշանը մեզ համար լեզուն է, որ հասարակական խմբովին գործունէութեան անխուսափելի մի պայման է, առանց որի գոյութիւն չի կարող ունենալ նոյն իսկ ինքը հասարակութիւնը: Լեզուն ստեղծագործութեան ամենագլխաւոր միջոցն է և ոչ միայն գաղափարների հոգեկան ստեղծագործութեան միջոց, որոնց միմիայն խօսքերով կարելի է արտայայտել և որ խօսքերի շնորհիւ կարող են հասարակութեան սեփականութիւն դառնալ: Լեզուն մինչև անգամ հասարակութեան մէջ նիւթական արդիւնաբերութեան միջոց է, որովհետև անկարելի կը դառնայ արդիւնաբերութիւնը, եթէ արդիւնաբերողները միմեանց չը հասկանան: Լեզուն մարդկանց միացնելու և բաժանելու միջոց է: Թէև մենք չը գիտենք դեռ, թէ ինչպէս է ծագել լեզուն, չը գիտենք այն օրէնքները, որոնցով լեզուն հասել է իւր զարգացման վերջին շրջանին, բայց գիտենք, որ լեզուն էլ զարգացել է յայտնի օրինաւորութեամբ, որ միատեսակ օրգանիզմ ունեցող և միատեսակ պայմաններում ապրած էակների մէջ պէտք է ծագէր և զարգանար միևնոյն լեզուն: Այսպիսով լեզուն մի օղակ է, որի շնորհիւ միևնոյն հասարակութեան անդամները միմեանց հասկանում են և ստեղծւում է հասարակական յարաբերութիւն: Լեզուի շնորհիւ մարդիկ իրենց բնական հայրենիքի սահմաններից սկսել են դուրս գալ միասին կերակուր փնտռելու և թէ թշնամիների դէմ պաշտ-

պանուելու համար: Միւս կողմից լեզուի տարբերութեան շնորհիւ, որ առաջանում է կերակուրի և ցեղական տարբերութիւնից, մարդկութիւնը բաժանուել է դանազան մասերի:

Անասնական աշխարհում լեզուի խնդիր չկայ: Մի տեղ եկած հիւրը, որ գիտէ տանտիրոջ լեզուն, դառնում է նրա բարեկամը, իսկ լեզուն չը գիտեցող հիւրը օտար է և հանգամանքներին նայելով ծաղրի, ատելութեան կամ անտարբերութեան է արժանանում: Այսպէս՝ այն բոլոր մարդիկ, որ միեւնոյն լեզուով են խօսում, դառնում են մի հասարակական մարմնի անդամներ, որ ազգութիւն է կազմում: Հասարակական համերաշխութիւն և կապ ստեղծող պայմաններից մէկն էլ աւանդութիւններն են, որոնք նոյնպէս ծագում են և զարգանում նոյնպէս լեզուի շնորհիւ: Քանի որ լեզու չէր ստեղծուել՝ մարդը հնար չուներ իւր կեանքի փորձերը աւանդելու իւր սերնդին և իւր գիտեցածը և սովորածը իւր հետ տանում էր գերեզման. ուստի և ոչ մի աւանդութիւն չէր կարող ծագել: Այդ ժամանակներում գոյութիւն ունէր միմիայն անձնական փորձը: Լեզուն է, որ հնարաւորութիւն է տալիս մարդուն փորձով ձեռք բերած գաղափարները ուրիշներին հաղորդելու և լեզուի շնորհիւ դիտողութեան և փորձի ֆարդիւնքները աւանդում են սերունդից սերունդ: Հասարակական բազմազան փորձերի արդիւնքներ են կազմում սօցիալական և տեխնիկական զարգացումը: Բացի այս՝ լեզուն միջոց է տալիս պահելու ապագայ սերունդների համար մի ազգի անցեալ վշտերի և ուրախութեանց յիշատակը: Լեզուն է, որ աւանդութիւնների միջոցով ամրացնում է ազգային միութեան կապը:

Սակայն լեզուն միակ պայմանը չէ ազգային գոյութեան: Կան և ուրիշ բացառիկ պայմաններում ուրիշ ֆակտորներ, որոնք կարող են պահպանել ազգութիւնը մինչև անգամ լեզուն կորցրած դէպքերում էլ: Այսպիսի օրինակ տալիս են մեզ իրլանդացիները: Բայց նախ այս բացառիկ է և երկրորդ լեզուն միշտ ձգտումն է ունեցել յարմարուել ազգութեան գլխաւոր նեցուկներից զօրեղագոյնը լինելու: Առաջին կապը, որ ստեղծել է և ամուր կերպով շաղկապել մարդկութեան հասարակութեան օրգանիզմը—եղի է արեւակցական կապը և ծագումը մի ընդհանուր նախահօրից: Սակայն այս կապերը մարդկային ցեղի մեջ կարող էին բարձր նշանակութիւն ստանալ բան թէ անասնական աշխարհում միմիայն լեզուի շնորհիւ: Լեզուի շնորհիւ է նոյնպէս, որ մարդկութիւնը կարողացաւ դուրս գալ երամի սահմանից: Ա-

նասունների հօտը չի կարող յայտնի սահմաններից աւելի մեծանալ. երբ որ մի հօտ շատ բազմանում է՝ նրանից բաժանւում է մի մասը և կազմում է մի անկախ երամ, որ ոչ մի կապ չի ունենում իւր նախնական մայրենի հօտի հետ: Մարդկային հասարակութեան մէջ լեզուն այն շաղկապն է, որի շնորհիւ նոր և հին սերնդոց մէջ պահպանւում է միութիւնը: Լեզուի շնորհիւ էլ պահպանւում է ազգակցական և ցեղական կապը: Զարգացման սկզբնական աստիճաններում, երբոր հասարակական կազմակերպութիւնը հիմնուած է արեւակցական կապերի հետ, ցեղը և ազգութիւնը բոլորովին միացած են: Հետզհետէ ծագում են այս պայմանների և կապերը, որոնք լեզուի չափ նշանակութիւն են ստանում ազգային գոյութեան խնդրում, առաջ են գալիս նոր կապեր, որոնք մարդկանց միացնում են: Քանի աւելի և աւելի մարդիկ ընտելանում են նստակեաց կեանքին՝ այնքան աւելի զօրեղ նշանակութիւն է ստանում նրանց համար պապերից ժառանգած ընդհանուր հայրենիքը: Այնտեղ, ուր հասարակութիւնը ստոր զարգացման աստիճանի վրայ է գտնւում և ուր համայնքները միացած են լոկ արեւակցական կապերով՝ այնտեղ առանձին ազգերը չեն խառնւում միմեանց հետ, եթէ մինչև անգամ նրանք մէջէմէջ էլ ապրելիս լինեն: Սրա ապացոյցը մենք տեսնում ենք ազգերի տեղափոխութիւնների ժամանակ, երբ զանազան ցեղեր խառն ապրում էին, բայց ամեն մէկը պահում էր իւր ազգային առանձնայատկութիւնները: Բայց երբոր ազգաբնակչութիւնը բազմանում է, ընդհարման և շփման հանգամանքները հեշտանում են, այն ժամանակ միատեղ ապրող ազգերի ինքնուրոյնութիւնը կարելի է պահել միմիայն խառն պսակների արգելումով կամ ուրիշ օրէնքներով, թէև այսպէս էլ դժուար է խառնուելու առաջն առնել: Լեզուն էլ կեանքի զարգացման հետ ամբողջ երկրի մէջ միատեսակ է դառնում: Աւելի դանդաղ կերպով է կատարւում լեզուների միութիւնը, երբ որ միատեղ ապրող երկու ցեղերից մէկը տիրապետող է հանդիսանում: Սակայն այստեղ էլ հասարակական պահանջները ստիպողաբար միացնում են վերջապէս տարբեր լեզուները: Տասնամէկերորդ դարում Անգլիայում նորմանները խօսում էին ֆրանսերէն, որ բերել էին իրանց հետ տիրապետողները և ամբողջ երկու դար այս լեզուն պալատական և ազնուական դասակարգի լեզուն էր, բայց վերջապէս լուծուեց այս լեզուն անգլո-սակսոնական ժողովրդական օտար ազդեցութեան տակ: Ֆրանսիայում նոյնպէս արքունիքի և ազնուական դասակարգի

լեզուն գերմաներէն էր, երբ որ հասարակ ժողովուրդը ֆրանսերէն էր խօսում: Այս դրութիւնը հինգ դար տեւեց, բայց վերջապէս տասներորդ դարում գերմաներէնը ֆրանսիայում անյայտացաւ: Այստեղ տիրապետող ցեղը լեզուի կողմից ձուլուեց յաղթուած ցեղի հետ և մի ազգ դարձաւ: Երբ որ հասարակական յարաբերութիւնները զարգանում են և բուրժուազական կազմակերպութիւնը տիրապետող է դառնում—այն ժամանակ մի երկրում ապրող մարդիկ աշխատում են ստեղծել մի խօսակցական լեզու միմեանց հասկանալու համար: Բայց երբ որ մի երկրի արդիւնաբերութիւնը դառնում է դրամական (капиталистическое) հասարակութեան մէջ ծագում է ազգային հայրենիքը ազգային տէրութիւն դարձնելու ձգտում: Կապիտալը ներքին լայն շուկաների կարիք ունի, որպէս և ազատ հաղորդակցութեան: Նոյնպէս կապիտալին կարևոր է օտար երկիրներ ազատ մուտք ունենալ: Բայց օտար շուկաներ կապիտալը կարող է աւելի ազատ մուտք ունենալ, եթէ զօրեղ է այն պետութիւնը, որին պատկանում է կապիտալը: Ամենից զօրեղ է այնպիսի ազգային պետութիւնը, ուր չկան տարբեր ազգերի մրցումից առաջացած դժուարութիւններ: Լեզուների տարբերութիւնը խանգարում է ներքին հաղորդակցութեան գործը ոչ պակաս քան մաքսատուները, ուստի և կապիտալի համար ձեռնառու է մի ազգից բաղկացած կամ մի լեզուով խօսող պետութիւն: Այսպիսով բուրժուազիայի շահերը պահանջում են, որ ժողովրդի բոլոր մասերը կազմեն մի պետութիւն և որ պետութեան բոլոր ազգերը խօսեն նրա լեզուով: Պետական իշխանութիւնը նոյնպէս շահագրգռուած էր ազգային միատեսակ տէրութիւն ստեղծելու, որպէս և բուրժուազիան: Միջնադարեան տէրութիւնը բաղկանում էր մանր գաւառների թոյլ միացումից, ուր վարչութեան ղեկը գտնւում էր կամ համայնական ինքնավարութեան կամ ֆէօդալական իշխանի ձեռքում: Այս ժամանակներում իշխանութիւնը բոլորովին չէր հետաքրքրւում թէ ինչ ազգերից են բաղկացած տէրութեան գաւառները: Կապիտալի զարգացման հետ զուգընթացաբար զարգանում է և կառավարում երկիրը կենտրոնացած բիւրօկրատիան, որի պաշտպան է լինում կենդրոնացած զօրքը: Սակայն առանց միատեսակ լեզուի չի կարող զարգանալ ոչ կենդրոնացած բիւրօկրատիան և ոչ միատեսակ զօրք: Այսպիսով ազգայնութեան գլխաւոր նշանները են՝ լեզուն և հայրենիքը, առանց որոնց չի կարող ծագել և ազգային պետութիւն:

ԿԱՐ. ԵՆԳԻՐԱՐԱՆ